

**Նիւթեր 1955-ի Ազգային-  
եկեղեցական ժողովին  
մասնակցող Ամերիկահայ  
պատգամաւորներու  
վերաբերեալ**



# ԱՐՄԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

Սեպտեմբեր 12, 1955  
Նիւ Նորք, Ն.Յ.

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

ՀԱՅՈՐԴԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԿՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՎՐԱՋՆՈՐԴԱՐԱԿԻ

ԴՐԱՐԴԱ

Առ ի գիտութիւն Հայաստանեայց Եկեղեցու հաւատացեալ ժողովութեան գիւղարակիթեան կոլտանք Ամենայն Հպյոց Հայրապետի ընդունած առ ունչութեամբ Մայր Աթոռէն ստացուած Հետեւ իւալ շրջաբերական-նամակը

ԴԻՀԱՆ ԱՐԱՋԱՌՈՂԱՐԱԿԻ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՆՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱՄԱԿԸ

ՈՒՂՂՈՒԱԾ ԲՈԼՈՐ ԹԵՍԵՐԻՆ՝

ԱՅԵՆԱԳՈՅՆ ՀԱՅՈՑ ԾՎՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԵՒՆ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու հնաւանդ սովորութեան համաձայն, գերագոյն Հոգեւոր Խորհուրդը որոշել է 1955 թուականի Սեպտեմբերի 25-30ը Մայր Աթոռ Ս. էջմիածնում Հրաւիրել ազգային-Եկեղեցական ժողով Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան Համար. Ժամանակն է վերացնելու Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու դարւեոր կենտրոն Մայր Աթոռ Ս. էջմիածնի Հայրապետական Աթոռուց սգի սեւ շղարշը, որը ծածկուել է երջանկայիշատակ եւ յաւէտ ողբացեալ նորին Ս. Օծութիւն Տ.Տ. Գէորգ Զ. առաքելաշաւիդ Հայրապետի անփոխարինելի մահից յետոյ, եւ ընտրել արժանաւոր նոր Գահակալ։

Հանգուցեալ Վեհափառի մահը սգացին մեր Եկեղեցօք թույր սրտացաւ Հաւատացեալները Հանգուցեալ Վեհափառը, իւրայատուկ խոհեմութեամբ, զգաստ ու իմաստուն ղեկավարութեամբ, իրատես ու ողջամիտ ազգային-Եկեղեցական քաղաքականութեամբ, ժողովրդասէր ու Հայրենանուէր գործունէութեամբ, նոր ու խոստումնալից էջ բացեց մեր ազգային-Եկեղեցական նոր տարբեգութեան մէջ՝ Հայաստանեայց Եկեղեցու համար։

Մեռաւ Գահակալը, բայց կանգուն է Գահը Վեհափառի մահով չի աւարտուել Մայր Աթոռ Ս. էջմիածնի պատմական ղերը Հայ կեանքում Ս. էջմիածնը Հազարամեակներով Հայ ժողովրդի Համար Հանդիսացել է Մի Սրբութիւն Սրբոց, մեր ժողովրդի ամենանուիրական ու իստավայրերից հնագոյնն ու Համազգայինը, որի պատմութիւնը, գոյութիւնը սերտորէն կապուած է եղել Հայ ժողովրդի կեանքի պատմութեան ողջ գոյութեան հետ Ս. էջմիածնի ա-

Նուն ու խորհուրդը նուիրական ու թանկ է եղել ամէն մի հաւատացեալ հայ սրտի համար Հայ հաւատացեալ ժողովուրդը, իր հոգու բովանդակ ջերմութեամբ, ազգային-եկեղացական հպարտութեան ամենավառ, սրտագին ու սիրաշատ զգացմունքնով է կապուել Ս. էջմիածնի հետ, որովհետեւ հայ ժողովուրդը Ս. էջմիածնի հարազատ զաւակն է, Կրօ հոգեւոր ծնունդը Ահա թէ ինչու Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութիւնը միշտ էլ հանդիսացել է մեծ ու պատմական իրադարձութիւն մեր ազգային-եկեղեցական կեանքում:

Ուրախ ենք ազգովին, որ մեր ազգային-եկեղեցական պատկառելի ժողովը տեղի պիտի ունենայ այնպիսի մի ժամանակաշրջանում, իր միջազդ գային քաղաքական հրարութիւն վրայ իրենում կ'ու մնայուն կաղաղութեան արուածին ու իր սույնութիւնում ծիւեցի ճայի կվենակալք բար չորս մեծերի բար նակառութիւնները շօշափելի էիմքերի վրայ ռայերի քանկալի եւ պոտքը նազադութիւնը:

Մայր Ամբո Ս. էջմիածնի համար 1955 թուականի Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսները հանդիսանալու են, արդարեւ, յաւէտ անմոռակալի եւ հոգեւոր միխթարութեան պատմական օրերը:

Համաձայն 1945 թուականի Ազգային-եկեղեցական ժողով գումարելու յատուկ կանոնադրութեան, որը խոտանաւ էր Հայաստաննայց Առաքելական Ս. Եկեղեցու ոգու եւ սկզբունքների, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեանը հրաւասուեն մասնակցելու մեր Եկեղեցու հաւատացեալ ողջ զաւակները՝ իրենց ընտրած եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորներով։ Հրաշանգույմ է ազգային-եկեղեցական ժողովի պատգամաւորների ընտրութիւնը կատարել ըստ վերեւ յիշուած կանոնադրութեան։

Ազգային-եկեղեցական այդ պատկառելի եւ սրբագումար ժողովի անդամ են։

- ա- Ս. էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամները։
- բ- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը իր եպիսկոպոսներով։
- գ- Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլիսի Պատրիարքները իրենց եպիսկոպոսներով։
- դ- Հայոց Եկեղեցու քոլոր առաջնորդները եւ առաջնորդական վոկանորդները։
- ե- Ս. էջմիածնի, Մեծի Տանն Կիլիկիոյ, Ս. Երուսաղէմի, Կոստանդնուպոլիսի Պատրիարքութեան միաբանութիւններից մեկան ներկայացուցիչ։
- զ- Եւ Հաւատացեալ ժողովուրդն իր ընտրած մէկ կամ աւելի պատգամաւորներով/Մինչեւ 25.000 ժողովուրդ ունեցող թեմը ընտրում է 30 տարին լրացրած մի պատգամաւոր։ Իւրաքանչիւր թեմը ընտրում է այնքան պատգամաւոր, որքան անգամ 25.000 ժողովուրդ պարունակում է իր մէջ։ Վերջին 25.000ը կարող է լրիւ չլինել, բայց ոչ պակաս 10.000ից։

Ազգային-եկեղեցական ժողովի թեմական պատգամաւորների ընտրութեան մասնակցում են Հոգեւորականները եւ քաղաքացիական շափականութիւննեցող մեր Եկեղեցու զաւակ հանդիսացող աշխարհական իրաւասու ծխականները։

Պատուիրակները պատգամաւորներին կարող են ընտրել իրենց միջիամ դրսից։

Անհրաժեշտ է շտապ Ճեռնարկել ազգային-եկեղեցական ժողովի պատ-

գամակորների ընտրութեան եւ ընտրուածների անունը, հայրանունը եւ ազգանունը՝ յայտնելի մեզ՝ դիմելու բարեխնամ կառավարութեան վիզաների իրաւունք ստանալու:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգամաւորների ընտրութեան առջիւ ծագած ամէն տարակուսանքների համար կարելի է դիմել նամակով կամ հեռագրով Ս. եջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդին:

Ըստ հնաւանդ սովորութեան, այս անգամ եւս մեր աշխարհական եւ եկեղեցական պատգամաւորները ընտրուած կը կը լինեն լաւագոյն, ազնիւ, բարի, ճշմարտապէս եկեղեցասէր եւ չերմ հաւատացեալ ծիսականներից, որունք վայելում են իրենց ժողովրդից թեմի Վարագութիւնը, համարանքն ու մեջարանք:

Գերագոյն Հոգեւոր Խորհրդունք Վիրահակ, և Բ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՀՈՐԴԸ, ԱՐՏԱՌՈՒՋ ՀԱՅԱՎԱՅՆՈՒԹՅԱՄՔ, ԱՑՍ ԸՆՏՐՈՒԹՅԱԿԱՆ ՍԵՎ ԵԽՍ ԿԲ ԴՐՍԻՌՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՄԱՐԻ, ԶԳՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆԿ ՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐ ԿԱՅԱԳՈՒԹԻՒՆԵՐԻ, ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՊԱՏԳԱԿ ՄԱՀՈՐՆԵՐԻ ՄԱՅՐ ՎՐՈՒՄ ՊԱՏԻՒ, ԱՌՃԱ, ՀԱՅՐԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԵՐԱԿԱՆ, ԾԿԵՂԵՑԱՍՄԱՀՈՐՆԵՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՆ Է ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՀԻՎՐԱՅ ԸՆՏՐԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՄԵԿԻՆ, ՈՐ ՀԱՅ ՊԱՀՐ ԲՈՎԱՆԴԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈԳՈՒԹԻՄ ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ Է ԶՄԻԱՄԻՍ-ՍԻՐԱԿԱՆ ՈԳԻՆ ՈՒ ԲՈՑԱՎԱՐ ԶԳԱՑՄՈՒԽՆՅԸ, ԸՆՏՐԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՄԵԿԻՆ, ՈՐ ԱՅՍՈՐ-ՈՒԱՅ ԲԱՐԴ ՈՒ ՇՁՈՒԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԵՆԱՅ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԱՅ ԱՊԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՐԱՀՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ՝ ՆԱԽՆԵԾԱՐ ԱՅՐԱՐԱՏԵԱԿԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՐ ՀՄԱՅՔ, ԿԱՐԵՆԱՅ ԽՈՐԱՑՆԵԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՐՆԵՐԻ ՄԻՉԵԻ ՄՐՏԱԳԻՆ ԱԿԻՆԴՈՒԹԻՒՆ ԴԱՐՁԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆԸ ԵԻ ՆԱԽՆԵԱՑ ՈԳՈՒՆ ԵԻ ՕՐԻՆԱԿԻՆ ՆԱԽՆԵԱՆՍՆԴԻՐ ԼԻՆԻ, ԱԶՃԻ ԼՈՅՍԻ ՊԵՍ-ՊԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՊԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՊԱՔԵԼԱՀԱՍՏԱՏ ՈՒ ԼՈԽՍԱԻՐ-ԶԱՅԻՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԿԱՆՈՆԸ, ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐԱՀՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՐԲԱԶԱՆ Ա-ԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՆՔՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆԸ, ՄԵՐ ԵԿԵՂԵ-ՑՈՒ ԱԶԳԱՑԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԽՆԵՐԸ, ԵՒ ԱՌԱՍՏԻ ԱԿԵԼԻ ՔԱՆ ԵՐԱԵՔ ՍԵՐՏԱՑՆԵԼ ԿԱՊԸ Ս. Է ԶՄԻԱՄԻՆ ՀԵՏ:

Մեր պատգամաւորութեան պարտքն է կազմակերպուած անցկացնել հայրապետական այս ընտրութիւնը, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու ընու-Հանրութեան եւ Հայ հաւատացեալ ժողովրդի միասնականութեան վեհ ու սրբազան սկզբունքներով, պատմական այդ ընտրութիւնը վերածել Հայ ժողովրդի միասնականութեան եւ Հայկատանեայց Առաքելական Եկեղեցու միութեան սըր-տառուչ տօնի, Հայ ժողովրդի սիրոյ, յարգանքի, երախտագիտութեան, խմբը-ւածութեան տօնի՝ մեր Մայր Եկեղեցու եւ նրա նոր ու արժանաւոր Հովուա-պետի շուրջը, որպէսզի միանգամ եւս ողջ աշխարհով մէկ հոչակուի, որ ՄԻ է ՀԱՅՈՑ ԱՊԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ:

Հայրապետական ընտրութիւնից եւ օծումից յետոյ, Հոկտեմբերի 4ին, նշանակուած է նորընտիր եւ նորաօծ Հայրապետի անդրանիկ մեծահան-դէս Հայրապետական սոււրը պատարագն ու եպիսկոպոսական առաջին ձեռնադրութեան շնորհաբաշխութեան հանդէս:

Ըստ գեղեցիկե համբուրելի սովորութեան համաձայն, նորընտիր Հայրապետը պէտք է կատարի եպիսկոպոսական ձեռնադրութիւն, իր Հայրապետական բարձր գնահատութեան եւ քաջալերանքին արժանացնելով մեր այն առաջնորդներին եւ կուսակրօն Եկեղեցականներին, որոնք իրենց Եկեղեցասէր ու Հայրենասէր գործունէութեամբ, իրենց թեմերի ազգային-Եկեղեցական կեանքի կազմակերպուածութեամբ, իրենց ժողովրդի ցանկութեամբ արժանացնել են եպիսկոպոսութեան բարձր ու պատասխանատու աստիճանին:

Ուրախ ենք արձանագրելու, որ այսօր էլ մեր հոգեւորականութեան շարքերում ունենք մի շարք արժանաւոր հովիւներ եւ առաջնորդներ, որոնք, վստահ ենք, որ կարժանանան նորընտիր Հայրապետի գնահատութեան:

Մի երրորդ հոգեւոր ուրախութիւն էլ Վերապահուած է մեր պատգամաւորներին եւ ուխտաւոր Հայ ժողովուրդին, որոշուել է Հոկտեմբերի ութիւն, Սրբոց Թարգմանչաց տօնին, կատարել Մայր Աթոռում Սրբալոյս Մեռնի օրհնութիւն:

Սրբալոյս Մեռնի օրհնութիւնն էլ Հայ ժողովուրդի սրտին մօտիկ ամենանւիրական ու համաժողովրդական, ազգային-եկեղեցական մեծաշուք ու խորհրդաւոր դիսակապարզի խնդրից մէկն է, որի նմանը չկայ Հայ մարդու հու համար ոչ մի տիգ եք ըստ մէ առթիւ:

Այս ուրախ առթիւ Հայ հակատպահակ ժողովուրդը հրաւիրում է "Դէմի հանուրց Հայաբաննեաց Մայր Աթոռու հանդիսատես ու տօնակից Լիլ Նելու Կրթաւոյս Վեհապետի մեծագոյն եւ Խորհրդագոր հանդէսի կպտարմանը!"

Ու կը գայ Հայ ուխտաւոր մարդը հեռու թէ մօտիկ գաղութներից, ծնրադրելու Ա. էջմիածնի հազարամեայ քարերի ու մեռնադրոշմ սրբութիւնների առաջ, կը գայ համբուրելու Հայրենի հողը, որի տէրն է այսօր Հայ աշխատաւոր մարդը:

"Մեր նախնեաց եւ մեր ներկայ Սրբութիւն Սրբոցը՝ Հայ քրիստոնեայ մարդու լուսոյ տաճարը՝ Մայր Աթոռ Ս. էջմիածինը իր սրբութիւններով եւ մեր ներկայ Մայր Հայրենիքը՝ իր պատմական յուշարձաններով, որպէս մագնիսական ուժ, կը բերեն տարաբնակ եւ հեռաբնակ Հայ ժողովուրդի ներկայացուցիչներին ու կը համախմբեն պատմական Տաճարի շուրջ, Հայրենի կարօտն առնելու..." /Գէորգ Զ/

Հոգեւոր ուրախութեան այդ օրերին, մենք իհայոյս ենք, որ Հայ հաւատացեալ մարդը՝ հաւատով զինուած, իր նախնեաց կրօնասէր ու կրօնագած ոգով ներշնչած կը կատարի որդիական իր բարոյական պարտքը Ս. էջմիածնի հանդէպահ Հին, աւանդական սովորութեան համաձայն, Սրբալոյս Մեռնի օրհնութեան առթիւ կատարելիք ընթացիկ ծախսերը միշտ էլ ցանկացել է հոգալ հաւատացեպի Հայ ժողովուրդը, ԴԱՐԱԱՍ ուղարկելով Մայր Աթոռու Կստահ ենք, որ այս առթիւ էլ, Հայ հաւատացեալ ժողովուրդը քաց կանի իր սրտի եւ քսակի բերանը... Մեծատունն ու ունենուը կը տան իրենց հարուստ լուման" քանակը չէ այնքան կարեւոր, որքան այն սէրն ու պատրաստակամութիւնը, որով արւած է այդ նուիրատւութիւնը Հայ Եկեղեցու կարիքների համար:

Պատգամաւորները կարող են իրենց հետ բերել այն սրտագին ու սիրաշատ նուիրատւութիւնները, որոնք կը լինեն Մայր Աթոռու պայծառութեան համար:

Օրհնեալ լինի նուիրատուների կեանքը եւ օրհնեալ Հայ ժողովուրդը:

Աղօթենք Ամենակարողին, որ իր հովանի բազուկը տարածի միշտ Հայ եռկրի վրայ, զօրացնի Հայ ժողովուրդին, արիացնի Հայ Հոգեւորականութեանը՝ իրենց նուիրական պարտքը կատարելու հանդէպ իրենց Ազգի, մեր փառապանծ Հայրենիքի եւ Հայաստաննեաց Առաքելական Ս. Եկեղեցու:

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՃՈՒՐԴ  
/Կնիք/

1955 թ. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԱՌԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ

ԶԵՐՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՍՐԲԱԼՈՅԱ ՄԵՌՈՆԻ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱԿԱՑ ԿԱՐԳԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 23-25ը - Պատգամաւորների, Հիւրերի եւ ուխտաւորների  
ժամանումը Մայր Աթոռ Ս. Եջմիածին:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 26ին - Եպիսկոպոսական ժողով:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 27-30ը - Ազգային-եկեղեցական ժողովի նիստերը եւ  
Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2ին - Հանդիսաւոր պատարագ եւ Ամենայն Հայոց  
Կաթողիկոսի օծումը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 4ին - Եպիսկոպոսական ձեռնադրութիւն:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 5-6ը - Ազգային-եկեղեցական ժողովի վերջին նիստերը  
եւ Հոգեւոր Խորհրդի անդամների ընտրութիւնը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 8ին - ՍՐԱԾ ԹԱՐԳՄԱՆՁԱՅՑ ՏՕՆԻՆ - Սրբալոյս Մեռոնի  
օրէնութիւնը:

Ժողովների ընդմիջումներին եւ ազատ օրերին  
կազմակերպուելու են շրջագայութիւններ ղէպի  
պատմական յուշարձանները եւ մեր ծաղկող Հայ-  
ունիքի տեսարժան վայրերը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 10-12ը - Պատգամաւորների, Հիւրերի եւ ուխտաւորների  
մեկնումը:

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՐՀՈՒՐԴ

ՅԱՆԿ՝ ԸՆՏՐԵԼԻ ՊԱՏԳԱՄԱՀՈՐՆԵՐՈՒ

---

- 1.- Աղաճանեան Եղուարդ
- 2.- Գաւուգնեան Հայկ
- 3.- Խնդոյեան Տ. Հմայեակ Վրդ.
- 4.- Խօլլիկեան Մկրտիչ
- 5.- Մարտիրոսեան Ալպըրդ
- 6.- Պըրթ Հարի
- 7.- Պօյաճեան Տիգրան
- 8.- Սմսարեան Հայկ
- 9.- Սմսարեան Տիգրան
- 10.- Վարժապետեան Տ. Բաբեկն Վրդ.
- 11.- Վարդան Ռւոլթըր
- 12.- Ցատուր Ցատուրեան

---

ՍՄՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն ցանկէն չորսին միայն /իաչանիշով/քուէ տալու իրաւունք ունիթ։ Ըստ կանոնի, սակայն, կրնաք ցանկէն դուրս անձերու ալ քուէ տալ, մնալով միշտ չորս անձի միայն քուէարկելու իրաւասութեան մէջ։

Ծանօթութիւն.՝ Զեր ստորագրութիւնը պիտի անջատուի Առաջնորդ  
----- Սրբազնին ձեռամբ քուէաթուղթը Քուէախոյզ Յանձնախումբին յանձնելէ առաջ։



# ԱՐՄԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

ԴՐՁԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 20  
Օգոստոս 25, 1955

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

ԹԵՄԻՍ ԲՈԼՈՐ ՀՈԳԵԻՈՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐ ԵՐՐՈՒՆ

Ս. Էջմիածնէն եկած հեռագիր մը կը հաղորդէր, թէ Սեպտեմբեր 25-30 տեղի պիտի ունենայ Կաթողիկոսական ընտրութիւն, Եպիսկոպոսական ժեռնադրութիւն եւ Սրբալոյս Միռոնի օրհնութիւն, եւ կը յանձնարէր անյապաղ կատարել պատգամաւորներու ընտրութիւն ու հաղորդել ընտրուածներու վիզայի համար:

Թեմական Խորհուրդս Օգոստոս 25ին, Առաջնորդ Սրբազանի նախագահութեամբ բացառիկ նիստ գումարեց եւ նկատի ունենալով՝ ա.-տըրուած ժամանակի սղութիւնը, բ.- թեմիս Կանոնադրութեան տրամադրութիւնները /Յօդուած 67-ի/, եւ գ.- Թեմական Պատգամաւորական Բացառիկ ժողովի մը գումարման պարագային մեծամասնութիւն չկազմելու հաւանականութիւնը, արձակուրդի օրերուն պատճառաւ, որոշեց՝

1.- Թղթատարով կատարել պատգամաւորներու ընտրութիւնը.

2.- Թեմիս բոլոր Պատգամաւորներուն ղրկել թեկնածուներու ցանկ մը, անոնց յանձնարարելով, որ իրենց քուէնները Առաջնորդարան փութացնեն գրաւոր, ամենէն ուշը Օգոստոս 31ին:

3.- Առաջնորդ Սրբազան Հօր Նախագահութեամբ Թեմական Խորհուրդէս ընտրուած Քուէախոյզ Յանձնախումբ մը, Սեպտեմբեր 1ին, պիտի ստուգէ քուէարկութեան արդիւնքը, պիտի հաղորդէ ընտրելիներուն եւ Ս. Էջմիածին՝ վիզայի համար:

Արդ՝ այսու ներփակ Զերի կը ղրկենք ընտրելի պատգամաւորներու ցանկը: Անոնցմէ չորսին միայն քուէ տալու իրաւունք ունիք: Ըստ կանոնի կրնաք ցանկէն դուրս ալ քուէ տալ՝ մնալով միշտ չորս անձի միայն քուէարկելու իրաւասութեան մէջ:

ՄԱՄՐԻ ԱՐՔԵՊՈԽԿՈՊՈՍ  
Նախագահ

Հայոց Արքայության գլուխացած

ՊԵՏՐՈՍ ՊՈՆՏԱՅԻ  
Ատենապիր

Դմիտրի Ավագյան. Տեղայիշտ:

ՀԱՅՅԵԱԿ ՎՐԴ. ԽՆԴՐ ՅԵԱՆ  
Ատենապետ



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

Օգոստոս 26, 1955  
Նիւ Եռք. Ն.Ե.

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՑԽՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Առ ի գիտութիւն Հայց. Եկեղեցւոյ հաւատացեալ ժողովուրդին այսու կը ծանուցանենք, թէ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդներկու օր առաջ ուրախութեամբ ստացանք հետեւեալ հեռագիրը.-

Յառաջիկայ Սեպտեմբեր 25-30 հրաւիրում է Ագային Եկեղեցական ժողով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան համար։ Ընտրութիւնից յետոյ տեղի է ունենալու Եպիսկոպոսական ձեռնադրութիւն, իսկ Հոկտեմբեր ութիւն, Սրբոց Թարգմանչաց Տօնին, նաեւ Սրբալոյս Միւռոնի օրհնութիւն։

Յանձնարաւում է անյապաղ ձեռնարկել պատգամաւոր-ների ընտրութիւն եւ ընտրուածների անունները, Հայրանունները եւ ազգանունները հեռագրով յայտնել մեզ Վիզաների Համար դիմում կատարելու բարեխնամ կառավարութեան։

Թեմական Խորհուրդը, Օգոստոս 25ին, Առաջնորդ Սըրբագան Հօր Նախագահութեամբ բացառիկ նիստ գումարեց եւ տուեալ պայմաններու մէջ պատշաճը տնօրինելով Հարկ եղածը հաղորդեց Թեմական Պատգամաւորներուն։

Դիման ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



# ԱՐՄԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 21  
ՕԳՈՍՏՈՍ 29, 1955

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

Թեմիս բոլոր Հոգեշնորհ եւ Արժանաշնորհ Հոգեւոր Հովհեներուն  
Պատուարժան Ծխական Խորհուրդներուն, եւ  
Մեծայարգ Թեմական Պատգամաւորներուն

Ս. էջմիածնէն եկած հեռագիր մը կը հաղորդէր, թէ Սեպ-  
տեմբեր 25-30 տեղի պիտի ունենայ Կաթողիկոսական ընտրութիւն, Եպիս-  
կոպոսական ձեռնադրութիւն եւ Սրբալոյս Միհոնի օրինութիւն, եւ Կը-  
յանձնարարէր անյապաղ կատարել պատգամաւորներու ընտրութիւն ու հա-  
ղորդել ընտրուածներուն անունները Վիզէի համար։

Առ այդ Թեմական Խորհուրդը, մեր նախագահութեամբ, Օ.  
գոստոս 25ին բացառիկ նիստ գումարեց, եւ նկատի ունենալով՝ ա.-տը՝  
ուած ժամանակի սղութիւնը, ք.- Թեմիս Կանոնադրութեան տրամադրու-  
թիւնները /Յօդուած 67-ի/, եւ գ.- Թեմական Պատգամաւորական Բացառիկ  
ժողովի մը գումարման պարագային Մեծամասնութիւն չկազմելու հաւանա-  
կանութիւնը, արձակուրդի օրերուն պատճառաւ, որոշեց։

1.- Թղթատարով կատարել պատգամաւորներու ընտրութիւնը

2.- Թեմիս բոլոր Պատգամաւորներուն դրկել թեկնածուներուն ցանկ մը, անոնց յանձնարարելով որ իրենց քուէնները Առաջնորդա-  
րան փութացնեն գրաւոր։

Արդէն իսկ Թեմական Պատգամաւորներէ 3/4ով ստացած ենք  
գուէաթուղթերը զորս Քուէախոյզ Յանձնախումբը, Սեպտեմբեր 1ին, պի-  
տի ստուգէ քուէարկութեան արդիւնքը ու պիտի հաղորդէ ընտրելիներուն  
եւ Ս. էջմիածին՝ Վիզէի համար։

Արդ կը յանձնարարենք անմիջապէս գումարել Ծխական Խոր-  
հուրդի Բացառիկ ժողով մը, մասնակցութեամբ ծուխիդ Թեմական Պատգամա-  
ւորներուն, որոնց միջոցաւ, մինչեւ Սեպտեմբեր 9ին, Առաջնորդարանը  
յղել Զեր Հարցերը, եթէ ունիք, զանոնք Վիճակիս պատգամաւորութեան  
եւ մեր միջոցաւ ներկայցնելու Ս. էջմիածին գումարուելիք Ազգային-  
Ծկեղեցական բարձր ժողովի նկատառութեան։

Օրէնքով զՁեզ ի բոլոր սրտէ եւ մաղթելով ի Տեառնէ  
ոյժ եւ կարողութիւն։

Մնամք ողջունիւ սիրոյ  
Աղօթարար

*Արքայի թուղթի նշան*  
ՄԱՍԻՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Այս Շրջաբերականէն դրկուած է նաև  
ծուխիդ Թեմական Պատգամաւորներուն



# ԱՐԱԶՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ թիվ 24  
ՍԵՊՏԵՄԲԵՐ 19, 1955

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

ԹԵՄԻՍ ԲՈԼՈՐ ՀՈԳԵՉՆՈՐԾ Եւ ԱՐԺԱՆԱՉՆՈՐԾ ՀՈԳԵԼՈՐ ՀՈՎԻՆԵՐՈՒՆ  
Պատուարժան Ծխական Խորհուրդներուն, եւ  
Յարգելի ԹԵՄԱԿԱՆ Պատգամաւորներուն。

Այսու կը հաղորդենք թէ հանդեպ առաջնորդական վիճակիս  
պատգամաւորներուն—Հոգ. Տ. ՀՄԱՅԵՎԱԿ Վրդ. ԽՈՂՈՅԵՎԱՆ, Հոգ. Տ. ԲԱԲԱՔ Վրդ. Վարժապետեան, եւ Տիարք Տիգրան Սմսարեան, Տիգրան Պօյաճեան, Եղուարդան, Հայկ Սմսարեան, Մկրտիչ Խոլլիկեան, Հէրի Պըրթ, կը Մեկնինք Սայր Աթոռ, բերելու մեր մասնակցութիւնը Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսի ընտրութեան Շուտով, ուրեմն, պիտի վերնայ այն սուգը որ իշած էր Ս. էջմիածնի Գահին Վրայ, այն մեծ կորուստովը զոր ազգը յունեցաւ յանձին Հայրենասէր եւ Մեծագործ երջանկայիշատակ Հայրապետին Տ. Տ. Գէորգ Զրդ Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսի մահովը:

Կը յանձնարենք Սեպտեմբեր 25ի Կիրակիին թեմիս բոլոր  
Եկեղեցիներուն մէջ յատուկ պաշտամունք եւ մաղթանք կատարելով Հայոց և  
Տէրոջ օրէնութիւնը բոլոր պատգամաւորներուն վրայ, որոնք աշխարհի ա-  
մէն կողմերէն Սայր Աթոռ հաւաքուելով կարողանան ընտրել յարմարագոյն  
Հայրապետ մը Ս. Գրիգոր Լուսաւորչի Հիմնած Ս. Գահին Վրայ:

Մեր բացակայութեան միջոցին մեզ պիտի փոխանորդէ էվընս-  
թընի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժանաշնորհ Տ.  
Վարդան ՔՀՆՅ. Մկրտիչ Ս. Գահին Վրայ:

Միրով կողջունենք մեր բոլոր հարազատները եւ կը հայ-  
ցենք Տէրոջ օրէնութիւնը բոլորիդ Վրայ:

ՄՆԱՄՔ ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐԾՈՒԹԵԱՄՔ  
ԱՌՈԹԱՐԱՐ  
*Տիգրան Մատուռիկիս*  
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊՈԽԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Հանօթութիւն. Բուէից առաւելութեամբ ընտրուած պատգամաւորներէն Տիարք  
Տատուր Տատուրեան եւ Հայկ Գաւուգճեան բանաւոր պատճա-  
ռաւ չկրցան մեկնիլ եւ անոնց տեղը պատգամաւոր եղան յա-  
ջորդ առաւելագոյն քուէ ստացող երկու ազգայիններ:



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

ՀԱՅՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Այսօտ կը հաղորդենք թէ Հոկտեմբեր 1, 1955 թօւականաւ Ս. Ե. Հ. Միածնէն Առաջնորդարանս հասած հեռագրով մը Գերագոյն Հոգեւոր Խորհրդու հուր-

"Այսօր, Ուրբաթ, Սեպտեմբեր 30, յետմիջօրէի ժամը 5ին, Ս. Ե. Հ. Միածնի Մայր Տաճարին մէջ, իջի պատգամաւորներու ներկա-  
յութեամբ գումարուած Ազգային Ծկեղեցական Ժողովը, 125 քուէ-  
ով, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Ռումանիոյ եւ Պուլ-  
կարիոյ Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգէն Եպիսկոպոս  
Պալճեան."

Այս ուրախ առիթով Առաջնորդական Փոխանորդ Արժանաշնորհ Տ.  
Վարդան ՔԷՆՅ. ՄԿՐԵԱՆ, յանուն թեմին, Հետեւեալ շնորհաւորական Հե-  
ռագիրը յղեց Նորին Ս. Օծութիւն Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Ազգ-  
ընտիր Կաթողիկոսին.

"Զերդ Վեհափառութեան Հայրապետական ընտրութեան եւ գահակա-  
լութեան առթիւ, Խոնարհաբար կը ներկայացնենք Հիւսիսային  
Ամերիկայի Արեւելեան թեմի Հայոց շնորհաւորութիւններն ու  
սրտագին բարեմաղթութիւնները:

"Կը յայտնենք մեր սէրբ, Հաւատարմութիւնն ու Նուիրումը  
Հանդէպ Մայր Աթոռին եւ կաղօթենք առ Աստուած որ տար Զերդ  
Ս. Օծութեան արեւելատութիւն, որպէսզի աստուածաշնորհ ի-  
մաստութեամբ առաջնորդէք ամբողջ աշխարհի մեր ժողովաւրդը  
որ կը նայի Միածնաէջ Մայր Աթոռին որպէս իր Հաւատքին եւ  
միութեան միջնարերդը:

Ապա Առաջնորդական Փոխանորդ Հայրը մասնաւոր շրջաբերականով  
մը Հրահանգեց թեմի Հոգեւորին եւ Արժանաշնորհ Հոգեւոր Հովիւներուն  
եւ Պատուարժան Ծխական Խորհուրդներուն որ Հոկտեմբեր 9էն սկսեալ յի-  
շատակեն նորընտիր Տ.Տ. Վազգէն Ա. Մայրագոյն Կաթողիկոսին անունը,  
կատարելով Հայրապետական մաղթանք եւ իսւելով պատշաճ քարոզ նուիր-  
ուած Մայր Աթոռին եւ Հայրապետութեան Անյանձնարեց նաեւ որ նոյն  
օրը, Ս. Պատարագի ընթացքին, Հայրապետական յիշատակութենէն անմիջա-  
պէս առաջ, Հոգեհանգստեան պաշտօն կատարեն Երջանկայիշատակ Տ.Տ. Գէորգ  
Չ. Մըրազնագոյն Կաթողիկոսի Հոգւոյն Համար:

ԴՐԱ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Հոկտեմբեր 4, 1955  
Երևան Ն. Տ.

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1954-1955 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԳԵՐԱՉՆՈՐԾ ՍՐՅԱԳԱՆ ՀԱՅՐ  
Եւ Պատուարժան Պատգամաւորներ,

ՕՐԾՆԱԲԵՐ ՄՈ Եղաւ 1954-1955 տարեշրջանը ՀԱՅՐ ԵԿԵ-  
ՂԵՑԵՈՒ ՀԱՄԱՐ ~~ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ~~ :

ՎԵՐԺՈՒԵցաւ ՍՈւգի քող ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԱՀԵՆ, ՈՐ ՃԳՈՒԱծ էր  
ԵՐՋԱՆԿԱՅԻՉԱՏՈՎ Տ.Տ. ԳԵՂԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՈՎ, Եւ ՉՆՈՐԾՈՒԵցաւ  
ՄԵԶԻ ՆՈՐ ԳԱՀԱԿԱԼ ՄԸ յանձին Տ.Տ. Վազգէն Կ. ՍՐՅԱԳԱՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻ-  
ԿՈՍԻՑ:

ԹԵՄԻՍ Առաջնորդական աթոռին ՀԱՄԱՐ ԸՆՏՐՈՒԵցաւ Առաջնորդ  
ԳԵՐ.Տ.ՄԱՄԲՐԻ Ս.ԱՐՔ. ԳԱԼՖԱՅԵԱՆ, ՈՐՈՒՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐ-  
ՀՈՒՐԴՍ ՀԱՆԱԳ, ԱՍՏՈՒԾՈՒ օԳՆՈՒԹԵԱՄԲ Եւ ԻՐ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՓՈՎ ԿԱՏԱ-  
ՐԵԼ ԻՐ պարտականութիւնները յօգուտ մեր ԹԵՄԻՆ գործոց Եւ ԿՐԵՆԱԿԱՆ  
ԿԵԱՆՔԻ ՉԵՆՈՒԹԵԱՆ Եւ բարօրութեան:

ԱՄԵՆԱԳԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ս.ԵՇՄԻԱԾՆՀՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐԾՈՒՐԴԻՍ ԵԿԱԾ ՕԳՈՍՏՈՍ 18 ԹՐ-  
ՈՒԱԿԻՐ ՀԵռագիր ՄԸ ԿԸ ՀԱՂՈՐԴԵՐ, ԹԻ ՍԵՊՏ. 25-30, 1955, ԽԵՂԻ ՎԻՏԻ  
ՈՒՆԵՆԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, ԾՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՃԵՇՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ  
Եւ ՍՐՅԱԼՈՅՍ ՄԻԼՈՒԹԻ ՕՐԾՆՈՒԹԻՒՆ, Եւ ԿԸ յանձնարարէր անյապաղ ԿԱ-  
ՄԱՐԵԼ պատգամաւորներոք ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Եւ ՀԱՂՈՐԴԵԼ ԸՆՏՐՈՒԱԾՆԵՐՈՒ Ա-  
ՆՈՒՆԵՆԵՐԸ ՎԻԶԱՅԻ ՀԱՄԱՐ:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐԾՈՒՐԴՍ ՕԳՈՍՏՈՍ 25ԻՆ, Առաջնորդ ՍՐՅԱԳԱՆ ՀՕՐ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ բացառիկ ՆԻՔԱ գումարեց Եւ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱՀՈՎ՝ Ա.-ՄԵՐ-  
ՈՒԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ՍՈՂՈՒԹԻՒՆԸ, Բ.՝ ԹԵՄԻՍ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐԸ /ՅՈՂՈՒԱԾ 67-Ն/, Եւ Գ.՝ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ. Բացառիկ ԺՈՂՈՎԻ ՄԸ  
ԳՈՒՄԱՐՄԱՆ պարագային ՄԵԺԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ ՀԿԱԳՄԵԼՈՒ ՀԱԷԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ,  
ԱՐԺԱԿՈՒՐԴԻ պատճառաւ, ՈՐՈՇԵՑ.

1.- ԹԵՂԹԱՏԱՐՈՎ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

2.- ԹԵՄԻՍ ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՒՆ ՂՐԿԵԼ ԹԵԿՆԱԾՈՒՆՆԵ-  
ՐՈՒ ցանկ ՄԸ, անոնց յանձնարարելով որ իրենց քուէները Առաջնորդա-  
րան փութացնեն գրաւոր, ամենէն ուշը ՕԳՈՍՏՈՍ 31ԻՆ:

3.- Առաջնորդ ՍՐՅԱԳԱՆ ՀՕՐ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐ-  
ՀՈՒՐԴԻՍ ԸՆՏՐՈՒԱԾ ԲՈՒԷԱԽՈՒՅԾ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՄԸ, ՍԵՊՏ. 1ԻՆ ԱՐԴ ՍՈՒ-  
ԳԻ ԾՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ աՐԴԻՒՆՔԸ, Եւ պիտի ՀԱՂՈՐԴԵԼ ԸՆՏՐՈՒԱԾՆԵՐԸ՝  
Ս. ԵՇՄԻԱԾԻՆ ՎԻԶԱՅԻ ՀԱՄԱՐ:

ՀԱՅ ԱՌԵՎԱՐԴԻԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ՄԵՐ ԹԵՄԻՆ ԸՆՏՐՈՒԱԾ ՊԱՏ-  
ԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝ ՀՈԳ.Տ.ՀՄԱՅԵԱԿ ՎՐԴ. ԻՆԴՈՒԵԱՆ, ՀՈԳ.Տ.ԲԱՐԳԵՆ ՎՐԴ. ՎԱՐ-  
ԺԱՎԿԵՄՈՒԵԱՆ, Եւ ՏԻՎԱՐՔ. ՏԻԳՐԱՆ ՄՄՄԱՐԵԱՆ, ՏԻԳՐԱՆ Պ.ՅԱՅԵԱՆ, Եղուարդ  
ԱՂԱՅԱՆԵԱՆ, ՀԱՅԿ ՍՄՄԱՐԵԱՆ, ՄԿՐՏԻՀ ԽՈԼԼԻԿԵԱՆ, ՀԵՐԻ ՊԸՐԾ ՍՈՎՍԵՍԵԱՆ  
—ԳԼԽԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ ԹԵՄԻՆ Առաջնորդ ԳԵՐ.Տ.ՄԱՄԲՐԻ Ս.ԱՐՔ. ԳԱԼ "աեանի

Սեպտ. 20, 1959, մեկնեցան Ս. էջմիածին՝ մասնակցելու համար Կաթողիկոս  
սական ընտրութեան Ազգային Եկեղեցական ժողովին:

Քուէից առաւելութեամբ ընտրութեած Պատգամաւորներէն Տիարք՝  
Տատուր Տատուրեան եւ Հայկ Գաւուգենեան բանաւոր պատճառաւ չկրցան  
մեկնիլ եւ անոնց տեղը Պատգամաւոր եղան յաջորդ առաւելագոյն քուէ  
ստացող երկու ազգայիններս

Հայց Եկեղեցւոյ բոլոր թեմերուն հետ մեր թեմն ալ ցնծաց եւ  
ուրախացաւ կատարուած այն իրականութեան համար որ տարւոյս Սեպտ. 30ին  
Ս. էջմիածնի նորոգեալ Մայր Տաճարին մէջ, 137 Պատգամաւորներու ներ-  
կայութեամբ գումարուած Ազգային Եկեղեցական ժողովը, 125 քուէով Ա-  
մենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Հայոց Ա-  
ռաջնորդ 48 տարեկան Գերաշնորհ Տ. Վազգէն Ս. Եպիսկոպոս Պալճեան, որուն  
Գահակալութիւնն ու թօնումը կատարուեցաւ Հոկտեմբեր 2, 1955ին:

### ԹԸՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱԶՄԸ

Անցնող տարեշրջանին, թեմակալ Առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ Արք.  
Գալֆանանի նախագահութեամբ՝ թեմական նորութիւնների կազմը կը բաղկանար  
ըստ հետեւեալին.

Հոգեշնորհ Տ. Հմայեակ Վրդ. Ինդոյեան՝ Ատենապետ  
Հոգեշնորհ Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան՝ նորհ ըղական  
Արժանաշնորհ Տ. Բարգէն Քնյ. Մագսուտեան՝ նորհ ըղական  
Արժանաշնորհ Տ. Լեւոն Քնյ. Առաքելեան՝ նորհ ըղական  
Տիար Տատուր Տատուրեան՝ Փոխ-Ատենապետ  
Տիար Պետրոս Պոնտացի՝ Ատենապետ  
Տիար Նշան Շահինեան՝ Գանձապահ  
Տիար Լեւոն Արսլանեան՝ նորհ ըղական  
Տիար Տիգրան Սմսարեան՝ նորհ ըղական

1954ի թեմական Պատգմ. ժողովի կողմէ Գեր. Տ. Մամբրէ Արք.  
Գալֆանան թեմակալ Առաջնորդ ընտրուելով՝ անոր տեղը նորութիւնների ան-  
դամ ընտրութեած էր Արժանաշնորհ Տ. Լեւոն Քնյ. Առաքելեան:

Նորութիւնն անցնող տարեշրջանին մէջ գումարած է 12 հերթա-  
կան նիստեր և նորհութիւն անդամներէն ոմանք մէկէ աւելի անդամներ,  
մասնաւոր գործերու կարգադրութեան հպմար այցելեցին թեմիս կարգ մը  
համայնքներուն, եւ ծխական-վարչական որոշ դժուարութիւններ հարթելու  
համար արդիւնաւոր աշխատանք կատարեցին:

Այս թուականաւ թեմական նորութիւնը չորս անդամներուն պաշ-  
տօնի շրջանը կը լրանայ եւ Պատուարժան ժողովը ընտրելու է անոնց տեղ  
նորերը Պաշտօնէ ղաղորդ անդամներն են՝ Հոգ. Տ. Հմայեակ Վրդ. Ինդոյեան,  
Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան եւ Տիարք Պետրոս Պոնտացի եւ Տատուր  
Տատուրեան:

### ԱՐԱՋՆՈՐԴԻ ՓՈԽԱՆՈՐԴԻ

Նկատի ունենալով որ Առաջնորդի բացակայութեան՝ Առաջնոր-  
դարանի ընթացիկ գործերը վարելու կամ Առաջնորդին օգնելու համար Փո-  
խանորդի պաշտօնը բաց կը մնար տարիէ մը ի վեր, նորին Սրբազնութիւնը,  
Օգոստոս 15 թուակիր պաշտօնագործ մը իրեն փոխանորդ նշանակեց Վէընս-  
թընի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովհաննես Արժ. Տ. Վարդան Քնյ. Մկրեան,  
որ պաշտօնը ստանձնեց Սեպտ. 20ին, երբ Առաջնորդ Սրբազն Հայրը, Կա-